

**Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության ծրագրի մեկնարկին նվիրված քննարկմանը**

Տավուշի մարզպետարանի նախաձեռնությամբ ստեղծված «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպությունը Գերմանիայի Դաշնության Ռեզեն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզերի միջև համագործակցության շրջանակներում, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /ԳՄՀԸ, GIZ/ կողմից տրամադրած դրամաշնորհի միջոցներով, արդեն անցնում է գործնական քայլերի իրականացմանը: Այս թեմայով այսօր աշխատանքային քննարկում տեղի ունեցավ Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանի մոտ, որին մասնակցում էին մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը, ԳՄՀԸ-ի «Համայնքների զարգացում հարավային Կովկասում» ծրագրի խորհրդատու Մերի Սարգսյանը և «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության նախագահ Հովհաննես Ղահրամանյանը: Ներկայացվեցին այն հիմնական աշխատանքները, որոնք իրականացվելու են հենց այս ծրագրի շրջանակներում. բազմալեզու կայքի ստեղծում, տեղեկատվական փաթեթների կազմում, ցուցանակների տեղադրում և շատ այլ գործընթացներ, որոնք կխթանեն մարզում տուրիզմի զարգացմանը և կնպաստեն Տավուշը ներկայացնել աշխարհին որպես տուրիզմի համար հետաքրքիր տարածաշրջան: Մարզպետ Հովիկ Աբովյանը ողջունեց աշխատանքների մեկնարկի կապակցությամբ և նշեց, որ մարզպետարանն իր ամողջ աշխատակազմով և բոլոր հնարավորություններով կաջակցի ծրագրի արդյունավետ իրականացմանը: